

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒԻԶԱՆՆԱ ՄԻՔԱՅԵԼԻ ԲՈՅԱԶՅԱՆ

**«ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՂՎԱԾՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԸ**

Ը.00.02-«Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Շովինար Զիվանի Կարապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Գրիգոր Ալեքսանդրի Ղարիբյան

տնտեսագիտության թեկնածու,
Գրիգոր Արշամի Նազարյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. նոյեմբերի 14 -ին, ժամը 15³⁰-ին՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Մ. Նալբանդյան փող., 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. հոկտեմբերի 14-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, տ.գ.դ., պրոֆեսոր՝



Ա.Լ.Ասլանյան

ԱՅՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ցանկացած երկրի տնտեսական և սոցիալական զարգացման շարժիչ ուժը տեխնոլոգիական և տեղեկատվական զարգացման մակարդակն է, և երկիրը, անկախ իր տնտեսության վարման եղանակից ու ձևից, անհնար է պատկերացնել առանց նորամուծությունների: Վերջիններս տնտեսական կյանքի և սոցիալական պայմանների վերափոխման կարևոր գրավականն են: Ի նկատի ունենալով, որ երկիրը կարող է առաջնային դիրք գրավել, եթե ունի նկատելի մրցակցային առավելություններ և թողարկվող արտադրանքի մեծ ծավալներ, հասկանալի է դառնում, որ նորամուծությունները անհրաժեշտ ու պարտադիր են: Հետևաբար դրանց կարգավորման և կառավարման մեխանիզմների բացահայտման կարևորությունը և ուսումնասիրությունը այժմեական և ակնհայտ է դառնում:

Տնտեսագիտական տեսանկյունից, նորամուծական գործունեության բովանդակությունը տնտեսական ոլորտից համարվում է նորույթի ստեղծումը և տարածումը: Այն իրենից ներկայացնում է յուրօրինակ արտադրողական ուժ, որը գիտական արտադրանքի օգտագործման միջոցով իրականացնում է տնտեսվարող սուբյեկտների տնխնիկատնտեսական պահանջունըների բավարարում: Այսինքն, նորամուծությունները հանդես են գալիս որպես տնտեսվարող սուբյեկտների արտադրական և առևտրային խնդիրների լուծման միջոցներ: Ընդ որում, շուկայական տնտեսության պայմաններում նորամուծական գործունեության իրականացումը միջորդավորվում է առևտրային նպատակահարմարությամբ: Վերջինս տնտեսվարող սուբյեկտներին ստիպում է համադրել նորամուծական գործունեության ուղղությամբ կատարվող համախառն ծախսերն այն արդյունքների հետ, որոնք կարող են ստացվել նորամուծության՝ շուկայի կողմից իրացման դեպքում: Նորամուծությունների նկատմամբ հասարակության ունեցած հետաքրքրությունը պայմանավորված է նորամուծական նախագծի իրականացման հետևանքով ստացվող սոցիալական արդյունքի՝ բնակչության բարեկեցության բարձրացմամբ, այսինքն այն ապագա եկամտի չափով, որը պետք է ստացվի նորամուծական նախագծի իրականացումից:

ՀՀ տնտեսության և սոցիալական ոլորտի շարունակական զարգացման համար, զլոբալացման ներկա պայմաններում, լավագույն ուղի է դառնում նորամուծական գործընթացների ակտիվացումն ու կարգավորումը, այդ ոլորտը գնահատող ցուցանիշների համակարգի ձևավորումն ու ներդրումը, նորամուծական գործունեության սոցիալական ուղղվածության բացահայտումն ու գնահատումը:

Նորամուծության դիֆուզիան (լայնամասշտաբ տարածում) կատարելագործում է տնտեսական համակարգի տեխնիկա-տեխնոլոգիական հիմքը, ընդլայնում է սոցիալ-տնտեսական նպատակների իրականացման հնարավորությունները, ապահովում է տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացում՝ ի հաշիվ ռեսուրսների ամբողջական և առավել լավ օգտագործման: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ նորամուծության դիֆուզիայի արագությունը և մասշտաբները մեծապես պայմանավորված են սոցիալական ոլորտի արտաքին և ներքին միջավայրի դյուրընկալությամբ, որն իր հերթին կախված է

մի շարք գործունեորից: Նորամուծության լայնամասշտաբ տարածում տեղի է ունենում միայն սպառողների կողմից դրա ընդունման դեպքում, երբ նորամուծական արտադրանքի կամ ծառայության օգտագործման փաստացի արդյունքներն ավելի լիարժեքորեն են բավարարում սպառողների պահանջ-մունքները: Ուստի, նորամուծությունների տարածման արագության և մասշտաբների վրա ազդող հիմնական գործոնը նրա նկատմամբ եղած վճարունակ պահանջմունքն է, որը հանդես է գալիս պահանջարկի տեսքով: Նորամուծության հասարակական ընդունումը վերջինիս նկատմամբ ձևավորում է հասարակական պահանջարկ, որի մեծությունը կախված է նորամուծական արտադրանքի կամ ծառայության զնից, որակից, սպառողների եկամուտների ու խնայողությունների մակարդակից, բնակչության առանձին խմբերի պահանջմունքների արդիակա-նությունից, բնակչության ավանդույթներից, սովորույթներից ու նախասիրու-թյուններից, փոխարինող և լրակազմող ապրանքների գներից և այլ տարբեր գործոններից:

Նորամուծական գործունեությունը հասարակական կյանքի տարբեր կողմերի նպատակաուղղված վերափոխումն է սոցիալական, տնտեսական և գործնական այլ արդյունքներ ստանալու նպատակով: Հետևաբար նորամուծական գործու-նեությունն ունի կիրառական ուղղվածություն: Նորամուծական գործընթացը ենթադրում է, որ մշտապես տեղի են ունենում նոր գիտելիքների ու տեխնիկայի և սոցիալական գործընթացների միավորման նոր ձևեր: Նորամուծական գործըն-թացն ունի զարգացման օբյեկտիվ միտում, և նրա մասնակիցներն ունեն և դրսևո-րում են իրենց շահերը: Այդ գործընթացում իրացվում են տարբեր տնտեսական և սոցիալական հարաբերություններ նորույթը ստեղծողի, ռեսուրսների սեփականատիրոջ, նորույթն օգտագործողի և տարբեր տնտեսական գործակալների միջև: Այս հարաբերությունները անհրաժեշտորեն պետք է կարգավորվեն և կառավարվեն որոշակի եղանակներով ու գործիքներով:

Ժամանակակից պայմաններում նորամուծություններն ունեն ցայտուն արտա-հայտված շուկակայական կողմնորոշում, որը, սակայն չի բացառում կարգավո-րիչների ներգործության ազդեցությունը դրանց վրա: Նորամուծական գործըն-թացների կարգավորումը կոչված է նորամուծական գործունեության մասնակից-ների համար նպաստավոր պայմանների ստեղծմանը: Նորամուծական գործըն-թացների կարգավորման իրականացումը ենթադրում է, որ պետական կառույց-ները պետք է գիտակցեն, նկատեն, ուսումնասիրեն նորամուծությունների ամ-բողջ գործընթացը և նորամուծական գործունեության պայմանները: Հայտնի է, որ հասարակության զարգացման ներկա փուլում նորամուծական գործունեու-թյունը կարող է դառնալ կայուն տնտեսական զարգացման հիմնական գործոն, շուկայական մրցունակության հիմք և սոցիալական խնդիրների լուծման բանալի, իսկ Ազգային նորամուծական համակարգի ստեղծումը՝ ժամանակակից տնտե-սության իրական և ֆինանսական հատվածի զարգացման ամենաարդյունավետ ճանապարհ: Այս գործում առանձնակի կարևորություն է ստանում նորամուծա-կան գործունեության սոցիալական ուղղվածությունը մեկնաբանումը, բացա-հայտումն ու առանձնացումը: Տնտեսության նորամուծական զարգացումը առաջադրում է նոր պահանջներ անհատի ունակությունների, ստեղծագործելու

ցանկության, մասնագիտական հմտությունների նկատմամբ: Ստեղծարարությունը ենթադրում է ժամանակակից մտածողություն, ինքաարտահայտման և սոցիալական համակարգին ինտեգրվելու նոր ուղիների ընտրություն: Ժամանակակից տնտեսությունում գիտատեխնիկական գաղափարները և մշակումները, կարգերի մտավոր, կրթական, ստեղծագործական, սոցիալական ներուժը դառնում են կայուն տնտեսական աճի շարժիչ ուժը:

Կարգավորման կարևոր խնդիրներից է տնտեսության մեջ սոցիալական համակարգի զարգացման և աճի տեմպերի ապահովման խնդիրը: Սոցիալական ստեղծագործ միջավայրի ձևավորման ժամանակակից ձևերի ապահովումը դիտվում է որպես երկրի տնտեսության շուկայական հիմքերի ամրապնդման և զարգացման հիմնական ուղի: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի ժամանակին և համարժեք ձևերով արձագանքել շուկայական տնտեսության պահանջներին և փոփոխություններին, մշակել անհրաժեշտ միջոցառումներ ծագած մարտահրավերների դեմ: Ժամանակակից պայմաններում ակնհայտ է տեղեկատվական և հեռահաղորդակցման միջոցների աննախադեպ զարգացումը, որը գիտական հետազոտություններ կատարողներին հնարավորություն է ընձեռել ընդլայնել ծառայությունների շրջանակը և իրականացնել նախկինում գոյություն չուներող նոր գործառնություններ: Տնտեսական համակարգի զարգացման և կայունության երաշխիք է ստեղծագործական, նորամուծական միտումների խթանումը և նորամուծական գործընթացների կարգավորումը:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս համակարգել տնտեսական և սոցիալական գործընթացները, օպտիմալացնելով տարբեր գործառնություններ իրականացնող սուբյեկտների և կառույցների ամբողջ գործունեությունը: Այս ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները կարիք ունեն գիտական համալիր մոտեցման և ուսումնասիրման: Աձող նորամուծական և սոցիալական ակտիվության պայմաններում այդ գործընթացների կարգավորման անհրաժեշտության դիտարկումը դառնում է երկրի տնտեսական կայունության ապահովման երաշխիք:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Աշխատանքի հիմնական նպատակն է միջազգային և հայրենական փորձի ուսումնասիրության, ՀՀ տնտեսական և սոցիալական ոլորտների գործունեության վերլուծության միջոցով առանձնացնել առկա հիմնախնդիրները, ընթացող նորամուծական գործընթացների միտումները, դրանց կարգավորման եղանակները և բացահայտել նորամուծությունների իրականացման և սոցիալական փոփոխությունների սերտության աստիճանը և առաջարկել կարգավորման նոր ուղիներ: Այդ նպատակով տարանջատվել են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել նորամուծական զարգացման էությունը, դրա վերաբերյալ տարբեր կարծիքների մեկնաբանությունը: Հիմնավորել տնտեսական զարգացման այս փուլում նորամուծական գործընթացների կարևորությունը:
- Ուսումնասիրել նորամուծական գործունեության տնտեսական և սոցիալական ցուցանիշների փոխկապվածության տեսական հիմնադրույթները:
- Ուսումնասիրել ՀՀ նորամուծական զարգացման հիմնախնդիրները,

ուղղություններն ու միտումները:

- Ուսումնասիրել նորամուծական տնտեսության զարգացման սոցիալական բնորոշ գծերը:
- Ներկայացնել ՀՀ նորամուծական զարգացման հնարավորությունները:
- Հիմնավորել և բացահայտել նորամուծական ցարգացման և բնակչության բարեկեցության բարձրացման փոխադարձ կապը:
- Բնութագրել սոցիալական ակտիվ, ստեղծագործ միջավայրը որպես նորամուծական գործունեության ակունք:

Ատենախոսության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ տնտեսական և սոցիալական համակարգն է և դրանում նորամուծական գործընթացների իրականացումը ու դրանց իրականացման միջազգային փորձը: Հետազոտության առարկան ՀՀ-ում նորամուծական գործընթացների և դրանց սոցիալական ուղղվածության կարգավորման հիմնախնդիրներն են՝ որպես այդ գործընթացների խթանման և իրականացման միջոց:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը: Ատենախոսության համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել դասական և ժամանակակից տնտեսագիտության հիմնարար դրույթները, նորամուծությունների և նորամուծական գործունեության տեսական և գործնական խնդիրներին, սոցիալական ակտիվ միջավայրի ձևավորման, երկրի մրցակցային առավելությունների տարբեր հարցերին վերաբերող հայրենական և արտասահմանյան հեղինակների, տնտեսագետների, գիտնականների ուսումնասիրությունների արդյունքները: Հետազոտության համար տեղեկատվական սկզբնաղբյուր են ծառայել հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականության աղբյուրները, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տեղեկագրերը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության վիճակագրական և վերլուծական նյութերը, Տնտեսություն և արժեքներ հետազոտական կենտրոնի վերլուծությունները, պարբերական գիտական հրատարակությունների և գիտական կոնֆերանսների նյութերը, Համաշխարհային տնտեսական ֆորումի, Մրցունակության համաշխարհային զեկույցի, Համաշխարհային Բանկի և այլ միջազգային կազմակերպությունների տարեկան զեկույցներն ու հաշվետվությունները:

Ատենախոսության գիտական նորույթը և հիմնական արդյունքները: Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները վերաբերում են ՀՀ նորամուծական զարգացման սոցիալական ուղղվածության հիմնահարցերին, որոնց գիտական նորույթը հետևյալն է.

- Առաջարկվել է նորամուծական գործունեության նոր մեկնաբանում, որպես ստեղծագործական աշխատանքի արդյունքի՝ նորույթի ստեղծման, օգտագործման, տարածման գործընթաց, որը զուգորդվում է սոցիոդինամիկ մուլտիպլիկատորի ազդեցությամբ հանրային միջավայրի որակական հատկանիշների բարելավմամբ:
- Մշակվել է կյանքի որակի և նորամուծական գործունեության սերտության աստիճանը բնութագրող մոդել, որն արտացոլում է նորամուծական գործունեության և սոցիալական ոլորտների փոխկապվածությունը, երբ

դրանցից յուրաքանչյուրի խթանումը բերում է մյուսի նշանակալի զարգացման:

- Բացահայտվել է, որ փոփոխությունների գործընթացները մշտապես դուրս են մղում նոր կողմնակի արդյունքներ և նորամուծական գործունեության սոցիալական կողմերի մեկնաբանման համար կարևոր են դառնում դրա արտաքին դրական և բացասական արդյունքները (էֆեկտները) կամ «էքստերնալները»:
- Ներկայացվել է նորամուծական գործունեության և հանրային ինստիտուտների փոխկապվածությունը բնութագրող համակարգ, որը հիմնավորում է նորամուծական գործունեության սոցիալական ուղղվածությունը և ցույց է տալիս նորամուծական գործունեության տարբեր սոցիալական տեսանկյունները:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Ուսումնասիրության տեսական նշանակությունն այն է, որ հետազոտությունում ամփոփված է նորամուծական գործընթացների կարգավորման և կառավարման մեթոդաբանությունը, որը թույլ է տալիս այդ գործընթացը համակարգել, կանոնակարգել և դրանով դարձնել գործնական նշանակություն ունեցող տեսական ուղեցույց: Աշխատանքում կատարված վերլուծությունները և տեսական ընդհանրացումները կարևորում են նորամուծական գործընթացների դերը, էությունը, առաձևահատկությունները, ուղղությունները և կարող են ունենալ տեսական և գործնական կիրառություն: Աշխատանքի գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ կատարված տեսական և վերլուծական ընդհանրացումները, եզրակացություններն ու առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ Ազգային նորամուծական համակարգի ձևավորման շրջանակներում նորամուծական գործընթացների կարգավորման և ՀՀ տնտեսության նորամուծական ռազմավարության մշակման և իրականացման գործում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսությունը քննարկվել ու հավանության է արժանացել Եվրոպական Կրթական Տարածաշրջանային Ակադեմիայում: Ատենախոսության հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի գիտական հինգ հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքի կառուցվածքը բխում է հետազոտության նպատակից և խնդիրներից: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքի ծավալը կազմում է 127 էջ:

ԱՅՆԱՆՆՈՒՄԻ ԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիակա-նությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, հետա-զոտության օբյեկտը և առարկան, աշխատանքի տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ինչպես նաև ներկայացվել են ատենախոսության գիտական նորույթը և ստացված արդյունքների գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին «Նորամուծական գործունեության տնտեսական և սոցիալական ուղղվածության փոխկապվածության տեսական հիմքերը» գլխում ներկայացվել են նորամուծությունների, դրանց տեսակների, սոցիալական ուղղվածության, նորամուծական գործընթացների առանձին մոդելների և նորա-մուծական գործունեության տնտեսական ու սոցիալական ցուցանիշների փոխ-կապվածության հիմնահարցեր:

Հետազոտությունում ներկայացվել են նորամուծությունների վերաբերյալ տարբեր բնորոշումներ և ձևակերպումներ՝ ինչպես գիտական, այնպես էլ իրա-վական: Յ.Ա. Շումպետերը նորամուծությունը ներկայացնում էր որպես ար-տադրական ռեսուրսների օգտագործման նոր համակցությունների միջոցով սպառողական ապրանքների նոր տեսակների, արտադրության և տրանսպոր-տային նոր միջոցների, նոր շուկաների, ինչպես նաև արտադրության կազմա-կերպման առաջավոր ձևերի ստեղծման և օգտագործման նպատակով իրակա-նացվող փոփոխություն¹: Յ.Շումպետերի հայացքները զարգացվել են նաև այլ արևմտյան գիտնականների կողմից, մասնավորապես կառավարման հիմնա-խնդիրներով զբաղվող ամերիկյան առաջատար մասնագետ Պիտեր Ֆ. Դրակերի կողմից: «Նորամուծությունը, ասում է նա, դա ձեռնարկատիրոջ յուրահատուկ գործիք է, միջոց, որի օգնությամբ վերջիններս օգտագործում են փոփոխություն-ները, որպես նոր բիզնեսի կամ ծառայության իրականացման հնարավորու-թյուն»²:

Նորամուծությունների տարածման տեսական հիմնավորումը փորձել է տալ նաև անգլիացի գիտնական Ջոն Ա. Հոբսոնը: Նա 20-րդ դարի սկզբին փոփո-խություն մտցրեց արտադրական գործոնների բանաձևում և «հող+կապիտալ+աշխատանք» բանաձևին ավելացրեց չորրորդ գործոնը՝ տարախղը, այսինքն մարդու ստեղծագործ հնտությունները, այլ կերպ ասած՝ ձեռնարկատիրական ունակությունը: Ըստ Հոբսոնի, ձեռնարկատիրոջ իրական ուժը պայմանավորված է նոր շուկաների հայտնաբերմամբ, նոր ապրանքների արտադրմամբ և արտադրության նոր միջոցների բացահայտմամբ: Նման արտադրությունը նա կոչում էր «առաջադիմական արդյունաբերության ոլորտ»³: Այլ կերպ ասած, ըստ Հոբսոնի նման ձեռնարկատերը դա ըստ էության Յ. Շումպետերի նկարագրած նորարարն է, կերպար, որին Հոբսոնը վերագրում էր կարևոր սոցիալական գործառույթներ:

¹Шумпетер Й. Теорияэкономического развития. - М.: Прогресс, 1982, с. 159.


²Дракер П. Инновации и предпринимательство. - М., 1992г., стр 4-6

³Хотяшева О.М. Инновационный менеджмент, М.2005 г., стр.20

Նորամուծությունը՝ նեղ իմաստով, կարելի է բնութագրել որպես նոր գաղափարների առաջ քաշում և դրանց իրացումը կյանքում: Դրա ստեղծագործական տեսանկյունը դիտարկելով որպես սոցիալական, կարելի է նշել, որ էականը նոր գաղափարների ծագումն ու զարգացումն է: Հենց սա էլ զխսավորն է, որովհետև, եթե չլինեն նոր գաղափարներ, ապա չի էլ լինի նորամուծություն⁴:

«Նորամուծություն» հասկացության վերոնշյալ տարբեր բնորոշումները մեկնաբանում են և դիտարկում դրա առանձին կողմերն ու գծերը: Ներկայումս առանձնացվում է նորամուծության հոգևոր, ստեղծագործական բնույթը՝ քննարկելով գիտական և մտավոր գործունեության շրջանակները: Նորամուծությունը համարվում է աշխատանքային գործունեության շարժառիթ, վարքի եղանակ, որը որակապես տարբերվում է նախկինում գոյություն ունեցողից⁵:

Կարևորելով նորամուծական գործընթացի տարբեր կողմերի բացահայտման անհրաժեշտությունը՝ ներկայացվել են նորամուծական գործընթացի տարբեր մոդելներ: Մոդելն, ըստ էության, նորամուծական գործընթացի՝ առանձին գործառույթային փուլերի բաժանման արդյունք է: Վերլուծությունների արդյունքում հեղինակը եզրակացրել է, որ ազգային նորամուծական տնտեսության ծնավորման պայմաններում նորամուծական գործընթացը կարելի է բնութագրել նոր որակավորում և հմտություններ պահանջող մասնագետներով աշխատող առաջադիմական տեխնոլոգիաների և շուկայի ներկայացրած պահանջումներին միջև եղած կապով



Գծապատկեր 1. Նորամուծական գործընթացի փոխկապակցված մոդել

Ըստ այս մոդելի՝ նորամուծական գործընթացը սկսվում է նոր շուկայական հնարավորության գիտացումից կամ նոր գիտական հայտնագործությունից և ավարտվում նոր ապրանքի նախագծման, մշակման, արտադրության և իրացման փուլով:

Նորամուծական զարգացման ընթացքում նորամուծությունների յուրաքանչյուր նոր սերունդ մեծացնում է իր ազդեցության ոլորտը երկրի սոցիալական կյանքում: Մարդու կյանքի որակի բարձրացումը ուղղակիորեն կապված է տեխ-

⁴Роберт Б. Такер. Инновациякакформулароста, М.: 2006, с. 19
⁵Инновационный менеджмент / Под ред. Л. П. Оголевой, М, Информ-М 2001, с. 20, 464

նույնզիական թարմացման հնարավորությունների հետ: Նորամուծական գարգացման ժամանակակից տեսությունները ամուր կապված են սոցիալական և կազմակերպական փոփոխությունների տարբեր հայեցակարգերի հետ: «Նորամուծական գործունեությունը կարող է ներկայացվել որպես ստեղծագործության և նորույթի ստեղծման գործընթաց, որն ըստ էության իրացնում է նորամուծական տարբեր համարժեքները, նորամուծական պահանջմունքները և ձեռնարկատիրական ջանքերը»⁶:

Ելնելով ներկայացված տարբեր տեսակետներից, սահմանումներից, այս հետազոտության նպատակներից և կատարված վերլուծություններից, հեղինակի կողմից առաջարկվել է նորամուծական գործունեության նոր բնորոշում: Նորամուծական գործունեությունը ստեղծագործական աշխատանքի արդյունքի՝ նորույթի ստեղծման, օգտագործման, տարածման գործընթաց է, որը զուգորդվում է սոցիոդինամիկ մուլտիպլիկատորի ազդեցությամբ հանրային միջավայրի որակական հատկանիշների բարելավմամբ: Այսպիսի ձևակերպումն ընդգծում է նորամուծական գործունեության և կյանքի որակի փոխկապվածությունը և բնութագրում նորամուծության սոցիալական ուղղվածությունը՝ նորամուծական գործունեության սոցիալական բնույթը, սոցիալական միջավայրը, մարդկային կապիտալի դերը և նորամուծական գործընթացների արդյունքում ձեռք բերված սոցիալական բնութագրերի, հասարակական ինստիտուտների ձևավորման ու բարելավման հնարավորությունները:

Հետազոտության ընթացքում հեղինակը եզրակացրել է, որ ժամանակակից տնտեսությունում գիտատեխնիկական գաղափարները և նշակումները, կադրերի մտավոր, կրթական, ստեղծագործական, սոցիալական ներուժը դառնում են կայուն տնտեսական աճի շարժիչ ուժը:

Տնտեսվարման տնտեսական և սոցիալական գործոնների հիմանխնդիրը միշտ էլ կենտրոնական տեղ է գրավել տնտեսագիտությունում: Դրա էությունը կայանում է նրանում, որ տնտեսական գործունեության արդունքները պետք է նպաստեն մարդկանց կյանքի որակի բարելավմանը: Այս խնդրի լուծումը անմիջականորեն կապված է նորամուծական գործունեության արդյունավետության հիմնախնդրի և ամենից առաջ այդ արդյունավետության գնահատման հիմնախնդրի հետ:


Նորամուծական գործունեության սոցիալական արդյունավետությունը արտահայտում է դրա օգտակարությունը հասարակության համար, և գնահատվում է այդ գործունեությունից ստացվող ներքին և արտաքին սոցիալական արդյունքները հարաբերելով այդ արդյունքները ապահովող ծախսերին: Նորամուծական գործունեության սոցիալական և տնտեսական ցուցանիշների փոխադարձ կապերը հաշվի են առնվում դրա արդյունավետության գնահատման ընթացքում: Ներքին սոցիալական արդյունքները բնութագրում են աշխատողների անհատական նպատակների ձեռքբերման և պահանջմունքների բավարարման աստիճանը: Արտաքին արդյունքները արտահայտում են նորամուծական նախագծի իրացման սոցիալ-տնտեսական հետևանքները կյանքի որակի վրա, նո-

⁶ Инновационный менеджмент/ Под ред. Л.Н. Оголевой, М, Информ-М 2001, 464с.с 17

րանմտության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, բնակչությանը ապրանքներով մատակարարման վստահության վրա, բնակչության առողջության վիճակի, նրանց բարոյահոգեբանական ներուժի բարձրացման, նորամտական արտադրանքի սպառման հաշվին ազատ ժամանակի տևողության ավելացման վրա:

Այսպիսով, նորամտական գործունեությունը իր բնույթով բարդ, մտավոր աշխատանքի ներդրման ոլորտ է: Նորամտական զարգացումն ապահովում են տարբեր մարդիկ, թիմեր և խմբեր, որոնք կազմում են նորամտական գործունեության սոցիալական միջավայրը: Դրանք այն մարդիկ են, ովքեր արժեքներ են ստեղծում՝ կյանքի կոչելով նոր գաղափարներ: Սոցիալական միջավայրի դերը նորամտական գործունեության կառավարման մեջ ամենակարևորն է և բազմակողմը: Ըստ էության սոցիալական միջավայրը ձևավորում է նորամտական գործունեության սկզբնաղբյուրները, նախադրյալները և նպատակները: Հեղինակի կարծիքով, տնտեսության հետագա ամբողջ զարգացումը պահանջում է ուսումնասիրել նորամտական և սոցիալական գործընթացների փոխադարձ կապերի տեսությունը, որը հնարավորություն կտա առաջարկել կարգավորման համապատասխան մեթոդներ և ձևեր:

Ամփոփելով այս ոլորտում կատարված հետազոտությունների արդյունքները հեղինակը կարևորել է նորամտական գործունեության և դրանով զուգորդված հանրային ինստիտուտների վերափոխումները, որոնք էլ որոշում են տնտեսական արդյունքների սոցիալական ենթատեքստը: Նորամտական գործունեության և հասարակության փոխկապվածությունը հեղինակը ներակայացնում է հետևյալ գծապատկերով՝



Գծապատկեր 2. Նորամտական գործունեության և հասարակության փոխկապվածությունը

Այս տեսանկյուններից յուրաքանչյուրը նորամտական գործունեության սոցիալական վեկտորին հաղորդում է հատուկ ուղղվածություն և կարող է որոշվել

այդ խումբը բնութագրող սոցիալական ցուցանիշների օգնությամբ: Նորամուծական գործունեության սոցիալական էությունը առանձնացնելիս անհրաժեշտ է նշել, որ մարդու ցանկացած գործունեություն, այդ թվում և նորամուծական գործունեությունը, ունի սոցիալական կողմ:

Նորամուծական գործունեության սոցիալական էությունը ներկայանում է առանձնահատուկ գծերով, քանի որ դրա աղբյուրը ոչ թե պարզ աշխատանքային գործունեությունն է, այլ ստեղծագործությունը: Գիտության մեջ ստեղծագործության և աշխատանքի փոխկապվածությունը չի ընկալվում միանշանակ: Երբեմն ստեղծագործությունը հակադրվում է աշխատանքին, նույնականացվում է դրա հետ կամ դիտարկվում է որպես աշխատանքի հատուկ տեսակ⁷:

«Ետագոտությունները վկայում են, որ նորամուծական գործունեության ծավալումն ապահովում է տարբեր սոցիալական արդյունքներ՝ որոնք ընդգծում են սոցիալական միջավայրի, հարաբերությունների բնույթի, մարդկային կապիտալի, ստեղծագործական ռեսուրսների և պահանջմունքների միջև նորամուծական գործունեության և հասարակության կապը ու հիմնավորում նորամուծական գործունեության սոցիալական ուղղվածությունը:


Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ ազգային նորամուծական համակարգի ձևավորման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները» զխումբը քննարկվել են ՀՀ գիտատեխնիկական զարգացման ցուցանիշները, նորամուծական գործունեության կառավարման ու կարգավորման նպատակները, սկզբունքները, ուղղությունները, ՀՀ-ում նորամուծական տնտեսության ձևավորման խնդիրները:

Նորամուծական գործունեության կառավարումը ենթադրում է տարբեր պետական ինստիտուտների նպատակաուղղված ազդեցություն դրա վրա՝ տնտեսության առավել համաչափ զարգացման ապահովման և որոշակի սոցիալական նշանակություն ունեցող նպատակների ձեռքբերման համար: Այսպիսի կառավարումը խիստ անհրաժեշտ է:

Նորամուծական գործընթացներին մասնակցում են երկրի պետական իշխանության մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք իրականացնում են նորամուծական ծրագրերի և նախագծերի պատվիրատուի, երաշխավորի և ներդրողների գործառույթներ, ինչպես նաև կատարում են նորամուծական գործունեության կառավարում և կարգավորում: Այդ գործընթացի ուղղությունները հեղինակի կողմից ներկայացվել է թիվ 4 գծապատկերում:

Պետության նորամուծական քաղաքականությունը իրենից ներկայացնում է տնտեսության վրա պետության ազդեցության ուղղությունների, ձևերի, մեթոդների ամբողջություն, մրցունակ արտադրանքի նոր տեսակների թողարկման խթանման նպատակով: Սակայն ներկա պայմաններում նորամուծական գործունեության պետական կառավարման համակարգը հեռու է կատարյալ լինելուց: ՀՀ-ում բացակայում են խոշոր գիտատար ընկերությունները, զարգացած չէ փոքր նորամուծական բիզնեսը, ֆոնդային շուկան, չկան կայուն գործող վենչուրային հիմնադրամներ:

⁷Комков Н. И. Инновационно-технологическая реформа национальной экономики России. – М.: Наука, 2006, С. 24-25.



Գծապատկեր 4. Նորամուծական գործունեության կառավարման և կարգավորման գործընթացի ուղղությունները

Նորամուծական քաղաքականությունը ենթադրում է նորամուծական գործունեության ուղղությունների և գերակայությունների ընտրություն բնակչության շահերին և նպատակներին համապատասխան: Այն իրականացնելու համար կառավարման մարմինները օգտվում են ծրագրային և նախագծային կառավարման մեխանիզմներից, գերակայությունների և ուղղությունների ընտրության գործիքներից, նորամուծական գործունեության խթանման մեթոդներից: Նորամուծական քաղաքականության իրականացումը ենթադրում է մի շարք խնդիրների լուծում, ինչպես օրինակ՝ կազմակերպական սոր մեխանիզմների և տեխնոլոգիաների ստեղծում և կորոզինացում, բիզնեսի, իշխանության և հասարակության շահերի համապատասխանեցում և հավասարակշռում: Հեղինակի կարծիքով, այս գործընթացում անհրաժեշտ է շեշտել նաև անհատական շահի և նորամուծական գործունեության հասարակական օգտակարության փոխկապակածության բացահայտումը, դրա արտաքին արդյունքների գնահատման մեթոդների մշակումը, նորամուծական նախագծերի սոցիալական ռիսկերի գնահատման մեթոդների մշակումը, տնտեսվարող սուբյեկտների նորամուծական գործունեության մոնիթորինգի ցուցանիշների համակարգի ձևավորումը, տեխնոպարկի սոցիալական ենթակառուցվածքի հայեցակարգի մշակումը:

Այս հիմնախնդիրների լուծումը ենթադրում է խոշոր բյուջետային միջոցների գոյություն: Կատարված վերլուծությունները վկայում են, որ «-ում դրանք սուղ են և հնարավորություններ չեն տալիս լայնամասշտաբ միջոցառումներ իրականացնել միայն պետական բյուջեի հաշվին:

Այսպիսով՝ շուկայական հարաբերությունների ժամանակակից համակարգը ձևավորված է և չի ապահովում համապատասխան ռեսուրսների ներհոսք հիմնարար գիտելիքների զարգացման, կադրային և տեղեկատվական ենթակա-


ռուցվածքի զարգացման համար: Որպես շուկայի անկատարության փոխհատուցում պետք է իրականացվի պետության մեծ մասնակցություն նորամուծական գործունեության մեջ: Այս մասնակցությունը կարող է իրականացվել գործարար ընկերակցության ձևով: Այս դեպքում նորամուծական գործունեություն իրականացնող ձեռնարկությունները իրենցից ներկայացնում են հզոր գործարար, արտադրական, գիտական, մշակութային, հոգևոր, կրթական, էկոլոգիական ներուժ: Միայն փոխշահավետ համագործակցության դեպքում՝ պետական և հասարակական աջակցությամբ, կարելի է իրականացնել նորամուծական զարգացման սոցիալական ուղղվածության ռազմավարություն, երկրում ստեղծել նորամուծական ակտիվության մթնոլորտ, ապահովել նորամուծությունների առևտրայնացման արագ և շահավետ պայմաններ: Հեղինակը եզրակացրել է, որ երկրի նորամուծական ռազմավարությունը, նորամուծական գործընթացների կառավարման նպատակների, սկզբունքների, ուղղությունների ու ձևերի հստակեցումը վճռորոշ դեր ունեն նորամուծական գործունեության սուբյեկտների ակտիվ ստեղծագործական միջավայրի ձևավորման, մարդկային կապիտալի զարգացման ծրագրերում կատարվող ներդրումների անհրաժեշտ մակարդակի պահպանման մեջ:

«Նորամուծական զարգացման կարևորագույն հիմնախնդիրներից է նորամուծական գործընթացի բոլոր փուլերում մասնավոր հատվածի ակտիվ մասնակցության խթանումը: Այդ նպատակին հասնելու համար պետք է հատկացվեն էական ֆինանսական արտոնություններ գիտական հետազոտություններում և մշակումներում մասնավոր հատվածի կողմից ներդրումների խթանման համար:

Տնտեսապես զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ նորամուծական գործունեությունը և գիտատար արտադրությունները հանդիսանում են տնտեսության իրական արագ զարգացող և արդյունավետ ոլորտ, որը հսկայական և աճող ազդեցություն ունի տնտեսության մյուս ոլորտների վրա: Գիտատեխնիկական գործունեության արդյունքների օգտագործմամբ ստեղծված տեխնոլոգիաները և արդյունաբերական նորամուծությունները պետության հիմնական ռեսուրսներից են:

Գիտատեխնիկական աշխատանքների մեջ առանձնացվում են գիտատեխնիկական աշխատանքների հետևյալ ուղղությունները՝ գիտահետազոտական, նախագծակոնստրուկտորական և տեխնոլոգիական, փորձնական նմուշների (արտադրանքի) խմբերի պատրաստում, շինարարության համար նախագծային աշխատանքներ և գիտատեխնիկական ծառայություններ:

2010թ. գիտատեխնիկական աշխատանքների ընդհանուր ծավալի և ուղղությունների վերաբերյալ ցուցանիշների վերլուծությունից եզրակացվել է, որ վերջին տարիներին հայրենական գիտատեխնիկական կազմակերպությունների աշխատանքի ծավալի, ինչպես նաև դինամիկայի աճ է գրանցվել: Ընդ որում ներակային շատ գիտահետազոտական ինստիտուտներ աշխատում են արտասահմանյան հեղինակավոր ինստիտուտների հետ համատեղ կամ նրանց պատվերով:



Պճապատկեր 3:⁸ Գիտատեխնիկական աշխատանքների ուղղությունների տեսակարար կշիռները գիտատեխնիկական աշխատանքների ընդհանուր ծավալի մեջ՝ 2005-2010թթ.

«-ում տնտեսության նորանուծական զարգացման այս փուլի հիմնական նպատակը ենթակառուցվածքային և ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծումն է: Հեղինակը հիմնավորված է համարել, որ նորանուծական տնտեսության ստեղծումը պետք է դառնա մեր երկրի զարգացման ռազմավարական ուղղություն, քանի որ նորանուծության հիմքում ընկած են նպատակաուղղված հետազոտությունները և մշակումները՝ գիտատեխնիկական նորանուծությունների ստեղծման և իրականացման համար, որոնք նպաստում են հասարակական արտադրության արդյունավետության բարձրացմանը:

Հայաստանի գիտելիքահենք տնտեսության ստեղծման և նորանուծությունների աջակցման ազգային համակարգի ձևավորմանն ուղղված ռազմավարության հայեցակարգը ենթադրում է հիմնախնդիրների առավել խորքային ուսումնասիրություն և սոցիալ-տնտեսական հարակից ոլորտների, մասնավորապես գիտության, կրթական, հարկաբյուջետային, արդյունաբերական և արտահանման խրախուսման քաղաքականությունների ինտեգրում մեկ ամբողջական համակարգում: Այդ առումով, նորանուծական համակարգի ձևավորման ռազմավարության հայեցակարգը կոչված է ներկայացնելու Հայաստանի Հանրապետությունում նորանուծական գործունեության խթանման համակարգի ձևավորման ռազմավարության տեսլականը, հիմնական նախաձեռնությունները, աջակցման գործիքակազմը և ակնկալվող արդյունքները: Նորանուծական զարգացումը

⁸Պճապատկերը կազմվել է մեր կողմից «Հ ԱՎԾ, «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը» 2005թ., 2006թ., 2007թ., 2008թ., 2009թ., 2010թ. հրապարակումների տվյալների հիման վրա կատարված հաշվարկների միջոցով, <http://www.armstat.am>

ենթադրում է անցում նորամուծական տիպի տնտեսությանը: Ներկայացվել են ՀՀ նորամուծական համակարգի ձևավորման հիմնադրույթները⁹:

ԳՀՓԿՄ պետական աջակցության անհրաժեշտությունը պայմանավորված է մի կողմից տնտեսական աճի ապահովման մեջ տեխնոլոգիական առաջընթացի կարևոր դերով, մյուս կողմից, այն հանգամանքով, որ մասնավոր հատվածը ոչ միշտ է պատրաստ ֆինանսավորել ԳՀՓԿՄ-ների մրցունակության պահպանման համար անհրաժեշտ ծախսերը ամբողջ ծավալով:

Հայաստանի տնտեսության իրական հատվածը ներկայումս հետազոտական գործունեության թույլ պահանջարկ ունի: Հետազոտական համագործակցությունը կորոդինացված չէ, հետազոտական համագործակցության խթանները նույնպես թույլ են զարգացած: Գիտահետազոտական կազմակերպությունները հաճախ կարող են առաջարկել նաև հիանալի մշակումներ և հեռանկարային տեխնոլոգիաներ, որոնք ձանապարհ չեն գտնում դեպի շուկա: Հնարավոր գործընկերներ, ներդրողներ կամ գնորդներ գտնելու խնդիրը, որպես կանոն, թողնված է նրանց սեփական նախաձեռնությանը: Ակնհայտ է, որ պետության կողմից գերակա գիտատեխնիկական աջակցության կարիքը այսօր ունեն նաև հայկական արդյունաբերության շատ ճյուղեր: Խնդիրը կայանում է նրանում, որ դրանցից ճիշտ առանձնացվեն ամենակարևորները ելնելով սահմանված սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներից: Ռազմավարական ճյուղերի սահմանման ցանկացած սխալ «չառ թանկ կարող է ստեղծել» պետության վրա: Միևնույն ժամանակ պետք է պարզ լինի, որ սահմանափակ բյուջետային ռեսուրսների հավասարապես առատ սկզբունքով բաշխումը չի բերի անհրաժեշտ տնտեսական արդյունքի: Դրա հետ կապված այսօր առաջնային պլան է դուրս գալիս գերակայությունների ճշգրտված և հստակ սահմանման խնդիրը: Տնտեսության դիվերսիֆիկացման և տարածքային համաչափ զարգացման տեսանկյունից կարևորվում է Հայաստանի մարզային քաղաքների տնտեսական զարգացման տեմպերի արագացում և ներդրումային ակտիվության խրախուսումը, համայնքային ենթակառուցվածքների զնահատումն ու զարգացումը: Մարզային քաղաքների զարգացումը հնարավորություն կտա ոչ միայն կրճատել տվյալ քաղաքի և Երևանի միջև անհամամասնությունը, այլ նաև կբարձրանա մարզային քաղաքների դերը, որպես տարածաշրջանի տնտեսական կենտրոն ապահովելով տարածքային անհամաչափությունների համահարթեցումը և երկրի կայուն տնտեսական աճը:

Այսպիսով, կարելի է ասել, որ անհրաժեշտ է որոշակիացնել սոցիալ-տնտեսական զարգացման կարգավորման և կառավարման լծակները, որոնք թույլ կտան դուրս գալ ՀՀ Ազգային նորամուծական համակարգի ձևավորման հետագծին հասարակության տրամադրության տակ գտնվող ռեսուրսների ստեղծագործ աշխատանքի, կապիտալի և ժամանակի արդյունավետ ծախսումներով:

⁹ «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգ», ՀՀ կառավարության 17.02.2011 թ. նիստի N 6 արձանագրային որոշման հավելված, 14 էջ, էջ 3, <http://mineconomy.am/farm/79/gorts.aruyt.pastafuxi.html>

Ատենախոսության երրորդ՝ «Նորամուծական գործունեության սոցիալական ուղղվածության ընդլայնման հնարավորությունները <<-ում» գլխում ներկայացվել են նորամուծական գործունեության սոցիալական գծերը ձեռնարկատիրության և գիտելիքահենք տնտեսության զարգացման գործում, ստեղծագործական ակտիվության և գործարարության միտումները <<-ում, մարդկային զարգացման և գլոբալ նորամուծական ինդեքսների փոխկապվածությունը:

<<-ում նորամուծական տնտեսության ձևավորման հնարավոր ուղղություններն են՝ բարձր տեխնոլոգիական արտադրանքի մուտքը շուկա, մտավոր սեփականության առևտրայնացումը, նորամուծական գործընթացին մասնակցող կազմակերպությունների և ձեռնարկությունների ինտեգրումը, գիտատար արտադրանքի և գիտատար ծառայությունների արտադրության ոլորտում ընկերակցության և պայմանագրային հարաբերությունների նոր ձևերի զարգացումը, գործունեության սոցիալական տեսակների զարգացումը, գիտական հիմնարկների համագործակցության ակտիվացումը, նորամուծական գործունեության վարկավորման կարտաբելագործումը, միջին և փոքր նորամուծական ձեռնարկատիրության զարգացումը, գիտահետազոտական աշխատանքերի խթանման մեխանիզմների օգտագործումը: Նորամուծական գործունեության ոլորտում բազմաթիվ խնդիրներ լուծելու նպատակով երբեմն պետական կարգավորումը համալրվում է հասարակական կարգավորմամբ: Այն իրականացնում է ձեռնարկատիրական կորպորատիվ շահերի պաշտպանություն, գործարար կյանքում էթիկայի նորմերի պահպանության վերահսկում, կորպորատիվ վիճակագրության վարում, խորհրդատվություն և իրավաբանական օգնություն, արտատրական համալիրների զարգացման ծրագրերի և հայեցակարգերի մշակմանը մասնակցություն:

Նորամուծությունները ստեղծվում են գիտատեխնիկական ոլորտում առաջխաղացման և տնտեսության պահանջմունքները բավարարելու համար: Այդ պատճառով անհրաժեշտ է բարենպաստ միաջավայր ստեղծել նոր միտքը, գաղափարը գիտության ոլորտից տնտեսություն տեղափոխելու համար: Հեղինակի կարծիքով, այդ է մեր երկրում նորամուծական ձեռնարկատիրության զարգացման գերխնդիրը: Տնտեսական և սոցիալական զարգացման շուկայական մեխանիզմների արդյունավետ կիրառումը հնարավորություններ կտա ձեռնարկատիրության ոլորտում ստեղծել մրցունակ միջավայր, որը կստիպի ձեռնարկատերերին շուկայում առաջատար դիրք գրավելու համար դիմել նորամուծության: Մեր երկրում անհրաժեշտորեն պետք է ձևավորվեն և լայնորեն տարածվեն նորամուծական ակտիվ սոցիալական միջավայր ստեղծող այնպիսի սուբյեկտներ, ինչպիսիք են այն կազմակերպությունները, որոնք նորամուծական գործունեության սուբյեկտներին ծառայություններ են մատուցում՝ ֆինանսական լիզինգի, իմփինիրինգի, խորհրդատվության, հավաստագրման և ստանդարտացման, մարքեթինգի և վաճառահանման, տեղեկատվական ապահովման ոլորտում, ինչպես նաև տեխնոպոլիսները, տեխնոպարկերը, բիզնես-ինկուբատորները և այլ կազմակերպական կառուցվածքներ, որ աջակցում են նորամուծության ստեղծմանը և տարածմանը:

<<-ում նորամուծությունների առևտրայնացումը համեմատաբար նոր և բիչ ծանոթ գործունեության տեսակ է, և սա մեկ անգամ ևս հաստատում է պետական

ագղեցության անհրաժեշտությունը երկրում ընթացող նորամուծական գործընթացների վրա: Հեղինակի կարծիքով, նորամուծական գործընթացների պետական աջակցությունը և կարգավորող մասնակցությունը երկրի զարգացման հեռանկարային ռազմավարության տեսակետից ունի մի քանի փոխկապված նպատակներ՝

- Ստեղծագործող անհատի համար ձևավորել ինքնաիրացման ստեղծարար և հանրորեն անհրաժեշտ արդյունքների ծեռքբերման պայմաններ:
- Խթանել գիտելիքների ներուժի վերածույնը առևտրային արդյունքի և տեխնոլոգիաների փոխադրումը լաբորատորիաներից դեպի իրական տնտեսություն, որն աշխատում է սպառողի համար:
- Նորամուծական գործընթացի սուբյեկտների համար ապահովել հավասար, իսկ եթե հնարավոր է՝ գերակա պայմաններ:

Նորամուծական գործունեության կարևոր բաղկացուցիչ է դիտարկվում մտավոր սեփականության ոլորտը: Կատարված հետազոտությունները վկայում են, որ ՀՀ-ում մտավոր սեփականության շուկայի թերզարգացվածության պատճառներից է գիտական մշակումների նկատմամբ առաջարկի և պահանջարկի անհավասարակշռությունը, երբ մշակումների հեղինակները համապատասխան ինստիտուտների բացակայության պատճառով չեն կարողանում գնահատել դրանց նկատմամբ շուկայում ձևավորված պահանջարկը:

Հեղինակը եզրակացրել է, որ նորամուծական գործունեության ոլորտը պետք է գրավիչ լինի ինչպես օտարերկրյա ներդրումների ներգրավման, այնպես էլ ոլորտում զբաղված համապատասխան որակավորում ունեցող մասնագետների համար: Այստեղ էական նշանակություն ունի կյանքի որակը՝ որպես սոցիալական ոլորտը բնութագրող ցուցանիշների համալիր, որը որոշվում է մարդկային գործունեության բոլոր բնագավառները հաշվի առնելով:

Բացի եկամուտների և ծախսերի ցուցանիշներից կյանքի որակի բնութագրման առավել հավաստի ցուցանիշ է «Մարդկային Ջարգացման» ինդեքսը: Նորամուծական զարգացման մակարդակի գնահատման համար օգտագործվել է նորամուծության համաշխարհային ցուցիչը, որը հաշվարկվում է երկու ենթացուցիչների հիման վրա:

Նորամուծական գործունեության և սոցիալական ոլորտի փոխկապվածությունը ընդգծելու համար կազմվել է էկոնոմետրիկ մոդել, որտեղ նկարագրվել է այս երկու բնագավառների միջև գծային կապը և դրա սերտության աստիճանը:

Դիտարկվող ցուցանիշների միջև կապը առավել հիմնավոր ձևով ներկայացնելու համար մշակվել են երկու էկոնոմետրիկ մոդելներ: Որպես սոցիալական ոլորտը և կյանքի որակը բնութագրող ցուցանիշ ներկայացվել են մարդկային զարգացման ինդեքսի 2011թ տվյալները (HDI), իսկ որպես նորամուծական գործունեությունը նկարագրող ցուցանիշ ընտրվել են համաշխարհային նորամուծական ինդեքսի (GII) վերջին 2011թ տվյալները: Ուսումնասիրությունը կատարվել է 70 երկրների տվյալներով: Հաշվարկվել է GII և HDI ցուցիչների միջև փոխկապակցվածությունը:

Հեղինակի հետազոտության հաշվարկով կորելյացիայի գործակիցը՝ $\approx 0,6$ է:

$$\text{Correlation (GII; HDI)} = 0,58217225 \approx 0,6 \quad (I)$$

Սա նշանակում է, որ մարդկային զարգացման ինդեքսի (HDI) և համաշխարհային նորամուծական ինդեքսի (GII) ցուցանիշների միջև գոյություն ունի միջինից բարձր դրական փոխկապակածություն:

Էկոնոմետրիկ մոդելի տեսքը հետևյալն է՝

$$Y_i = a + \beta \times X_i + \varepsilon \quad (II)$$

որտեղ Y-ը՝ կախյալ կամ բացատրվող փոփոխականն է, իսկ X-ը՝ անկախ կամ բացատրող փոփոխականը,

β - ն ռեգրեսիայի գործակիցն է, որը ցույց է տալիս թե X-ի մեկ միավոր փոփոխության դեպքում Y-ը քանի միավորով է փոփոխվում, a-ն մոդելի ազատ անդամն է, ε - մոդելի ստանդարտ սխալը,

i-դիտարկումների քանակն է, մեր հետազոտությամբ՝ ներգրավված երկրներ-ի քանակը, որոնց համար կազմվել է մոդելը :

Ընդ որում, մոդելում ընդգրկված տվյալները լոգարիթմվել են, որը թույլ է տվել ներկայացնել ցուցանիշներից յուրաքանչյուրի աճերի միջև եղած կապը:

Առաջին մոդելի դեպքում Y -ը LGII-ն է, իսկ X -ը LHDI -ն, իսկ երկրորդ մոդելի դեպքում՝ X-ը LHDI -ն, Y-ը LGII-ն: Որտեղ LGII-ն գլոբալ նորամուծական ինդեքսի, իսկ LHDI-ն՝ մարդկային զարգացման ինդեքսի բնական հիմքով լոգարիթմն է:

Առաջին էկոնոմետրիկ մոդելի արդյունքները հետևյալն են՝

$$LGII = 0,539 \cdot LHDI + 3.766 \quad (III)$$

Աղյուսակ 1


Էկոնոմետրիկ հավասարում

Փոփոխական	Գործակից-ներ	Ստանդարտ սխալ	t- վիճակագրություն	Հավանականություն
LHDI	0.539144	0.121910	4.422473	0.0000
Ազատ անդամ (C)	3.766116	0.058046	64.88169	0.0000
R ²	0,403			
Հավասարում	LGII = 0,539*LHDI+3.766			

Ստացված արդյունքները վիճակագրորեն նշանակալից են: Մոդելի արդյունքները փաստում են, որ մարդկային զարգացման ինդեքսը նշանակալի գործոն է գլոբալ նորամուծական ինդեքսի դինամիկան բացատրելու տեսանկյունից

Մե-վիճակագրություն >1.95 , ընդ որում HDI-ը բացատրում է GII-ի դինամիկան մոտ 40%-ով՝ $R^2=0.403$: Ստացված հավասարումը ցույց է տալիս, որ HDI-ի և GII-ի միջև կապը դրական է, և HDI-ի 1%-ով աճը հանգեցնում է GII-ի 0.54%-ով աճի:

GII և HDI ցուցանիշների միջև կապը կարելի է տեսնել նաև գրաֆիկորեն:



Պատկեր 5. Կյանքի որակը բնութագրող HDI ցուցչի ազդեցությունը նորամուծական գործունեության վրա

Գրաֆիկի վրա յուրաքանչյուր կետ համապատասխանում է HDI_i, GII_i գույզին: Ընդհանրապես ϵ անդամի առկայությունը հանգեցնում է ուղուցորոշ արժեքների շեղման:

Նույն տվյալների հիման վրա կազմվել է երկրորդ էկոնոմետրիկ մոդելը, որը բացատրում է վերոնշյալ գործոնների հետադարձ կապը:

Այստեղ նույնպես ստացված արդյունքները վիճակագրորեն նշանակալից են: Կապը նորից դրական է, և GII -ի 1% աճը հանգեցնում է HDI -ի 0.41% աճի: Ընդ որում գլոբալ նորամուծական ինդեքսը բացատրում է մարդկային զարգացման ինդեքսի դինամիկայի 45%-ը $R^2=0,451$:

Մոդելների արդյունքներից երևում է, որ դիտարկվող ինդեքսները բացատրում են միմյանց դինամիկայի մոտ կեսը, որը բավական նշանակալի արդյունք է միագործոն մոդելների համար: Այսինքն կարելի է փաստել, որ դիտարկվող երկու ինդեքսները ոչ սերտ, սակայն նշանակալի կապ ունեն:

Այսպիսի մոտեցման և քանակական վերլուծության դեպքում պարզ է դառնում, որ նորամուծական գործունեության և սոցիալական ոլորտները սերտորեն փոխկապակցված են և դրանցից յուրաքանչյուրի խթանումը բերում է մյուսի ավելի մեծ չափով զարգացման: Նախ, նորամուծական գործունեության խթանումը կհանգեցնի կյանքի որակի բարելավման, սա իր հերթին ավելի մեծ չափով կազդի նորամուծական գործունեության վրա և այսպես հաջորդաբար: Այս գործընթացը վկայում է, որ գործում է մի յուրահատուկ՝ սոցիոդինամիկ մուլտիպլիկատոր: Բարեկեցության բարձրացման սկզբունքային նոր հնարավորություններ ապահովող տնտեսության բնութագրիչ գիծը և առանցքային մեխանիզմն է դառնում տնտեսական աճի այս սոցիոդինամիկ մուլտիպլիկատորը: Սա է բացատրում ամբողջական սպառողական արդյունքի ինքնաաճման ֆենոմենը: Գիտելիքների նկատմամբ կիրառվող սոցիոդինամիկ մուլտիպլիկատորը ըստ էության

թյան ազգային հարստության բազմապատկման մեխանիզմ է, այն հարստության, որի արտադրության ընթացքում կուտակված գիտատեխնիկական ներուժը (նոու-հաու, ծրագրային ապահովում, վիրտուալ կապիտալի այլ ձևեր) օգտագործվում է, որպես «չսպառվող» ռեսուրս: Այս մուլտիպլիկատորի բնութագրերը առավել նկատելի են այն տնտեսություններում որտեղ գերակշռում է մարդկային կապիտալը և մարդկանց մտավոր գործունեության արդյունքները՝ գիտելիքները: Այս հետևությունը բխում է գիտելիքի բուն էությունից, որը պատկանում է արդյունքների այն խմբին, որոնք ունեն հանրային բարիքներին հատուկ հատկանիշներ՝ դրանց սպառողների թվի ավելացման հետ կապված լրացուցիչ ծախսերը հավասար են զրոյի:

Տնտեսական սոցիոդինամիկայի հիմնադրույթի համապատասխան տնտեսական աճի մուլտիպլիկատորը որոշվում է երեք բաղկացուցիչների փոխգործունեությամբ: Այդ բաղկացուցիչներն են՝ սոցիալական արդյունքը, անհատների ստեղծագործական հակվածությունը, հանրային ինստիտուտները:

Այս բաղկացուցիչները բնութագրելու համար հեղինակը եզրակացրել է, որ նախ և առաջ պետք է ուշադրություն դարձնել սոցիալական արդյունքի բնույթի վրա, հասարակության շահերի բավարարման արդյունքների վրա:

ՀՀ-ի համար ներկա փուլի ռազմավարական գերխնդիրն է գիտելիքահենք տնտեսության կառուցումը՝ հիմնված գիտատեխնիկական առաջընթացի համար ամկա լուրջ նախադրյալների իրացման վրա: ՀՀ-ն ունի որոշակի նորամուծական ներուժ և այն ուղղելով նորամուծության և ձեռնարկատիրության ոլորտ, կարող է դրական ազդեցություն ունենալ ՀՀ տնտեսության զարգացման վրա:

Նորամուծական գործունեության սոցիալական բնույթի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների արդյունքում հեղինակը հանգել է հետևյալ եզրակացությունների և կատարել գործնական նշանակություն ունեցող առաջարկություններ՝

1. Ամփոփելով կատարված հետազոտությունը և համապատասխան վերլուծությունները՝ կարող ենք ընդգծել, որ Հայաստանը կանգնած է ազգային նորամուծական համակարգի ձևավորման ընթացքում ծագած հիմնախնդիրների լուծման առջև: Ղրանց լուծումն անհրաժեշտ է, որպեսզի ամրապնդվեն ներդրումային և ինստիտուցիոնալ կարողությունները, մշակվի նորամուծության աջակցման հստակ քաղաքականություն և ռազմավարական ուղղվածություն, բարելավվի գործող կառույցների միջև եղած համագործակցությունն ու փոխհարաբերությունները, ձևավորվեն առևտրայնացման պայմանները և նորամուծական գործունեության ակտիվ սոցիալական միջավայրը:
2. Ազգային նորամուծական համակարգի ձևավորման ռամավարությունը, հեղինակի կարծիքով, պետք է արտացոլի երկրի զարգացման գլխավոր նպատակը՝ միասնական տնտեսական և հասարակական միջավայրի ձևավորումը, որում կվերականգնվեն մարդկային կապիտալի, բարձր զարգացած գիտության, կրթության, մշակույթի և առողջապահության արժեքները: Արդյունավետ տնտեսական աճի պայման է դիտվում ոչ միայն գիտատար և բարձր տեխնոլոգիական ոլորտների գերակա զար-

զացումը, այլև մարդկային կապիտալի լայն վերարտադրություն ապահովող ճյուղերի անընդմեջ զարգացումը:

3. Սոցիալական նպատակները գեղարվեստական համարող զարգացման ռազմավարությունը կարող է իրացվել սոցիալական ուղղվածության նորամուծական գաղափարախոսության պաշտոնապես ընդունման և տարածման հիման վրա, որը չի հանգում միայն պահանջմունքների բավարարման մտքին, այլ պայմանավորում է մարդկանց հմտությունների, ընդունակությունների իրացման եղանակներն ու միջոցները: Հետևաբար, կյանքի որակի բարձրացումը դառնում է նորամուծական գործունեության հետևանք, դրա արտաքին արդյունք:
4. Հեղինակի կարծիքով, նորամուծությունը անհրաժեշտ է դիտարկել որպես նորույթի ստեղծման, տարածման և օգտագործման գործընթաց մարդկանց, հասարակության նոր կամ արդեն հայտնի պահանջմունքների առավել լավ բավարարման համար և դրան զուգակցված են հասարակության սոցիալական, մշակութային և նյութաիրային միջավայրի փոփոխությունները: Նորամուծության բնութագրումը որպես շուկայում նոր կամ կատարելագործված արտադրանքի, տեխնոլոգիական գործընթացի իրացման վերջնական արդյունք, հեղինակի կարծիքով, նշանակում է նորամուծությունը բնութագրել միայն դրա արժեքային կողմերով: Այնինչ, նորույթը նախ և առաջ անհրաժեշտ է ստեղծել: Այդ պատճառով, ոչ թե իրացված նորույթը, այլ նորամուծական գործունեության համալիր գործընթացը (նորույթի ստեղծումը, տարածումը և օգտագործումը), ինչպես նաև տնտեսական և հասարակական կյանքում դրան զուգակցված փոփոխությունները կարելի է ներկայացնել որպես նորամուծության ամբողջական բնութագիր:
5. Ազգային նորամուծական համակարգի կայացման ճանապարհին կարևորվում է նորամուծական գործունեության սոցիալական միջավայրը, որը ձևավորվում է տարբեր սոցիալական խմբերի այնպիսի փոխհարաբերությունների արդյունքում, ինչպիսիք են հեղինակային իրավունքի պաշտպանությունը և նորամուծական գործունեության իրականացման հնարավորությունը, աշխատանքային շարժառիթների զարգացումը և աշխատողների մտավոր ներուժի օգտագործումը, նրանց ստեղծագործական համագործակցության հասնապատասխան մթնոլորտի ստեղծումը, նորամուծական արտադրանքի նկատմամբ սպառողական հետաքրքրության ձևավորումը, նորամուծական գործունեության ազդեցության հետևանքները մարդու կյանքի որակի փոփոխության վրա:
6. Այս հետազոտության շրջանակներում ներկայացվել են երկրի նորամուծական հնարավորությունները գնահատող մի շարք ցուցանիշներ՝ «Գլոբալ Մրցունակության Ինդեքս», ոլորտում զբաղված աշխատողների աշխատանքային շարժառիթների առկայություն և սոցիալական պայմաններ, ներդրումային ռեսուրսների առկայություն, մտավոր սեփականության շուկայի զարգացման ուղղություններ, նորամուծական գործունեության արտաքին դրական և բացասական արդյունքներ և այլն: Ուսումնասիրության

ընթացքում բացահայտվել է դրանց դերը տնտեսության նորամուծական զարգացման և դրա սոցիալական ուղղվածության մեկնաբանման գործում: Հայաստանի մրցունակության վարկանիշը մնում է ցածր մակարդակի վրա և սա վկայում է տնտեսական կառուցվածքի խոցելիության մասին: Երկրի մասնավոր և հանրային ոլորտների ինստիտուտները պետք է իրենց գործունեության նպատակակետը համարեն հիմնարար մակրոտնտեսական և միկրոտնտեսական գործոնների բարելավումը, որը կխթանի երկրի մրցունակության բարձրացումը: Իսկ այս նպատակի իրականացումը ենթադրում է ազգային տնտեսության նորամուծական զարգացման ապահովում, որով էլ հիմնավորված է նորամուծական գործունեության տնտեսական և սոցիալական ցուցանիշների փոխկապվածությունը: Նորամուծական գործունեության տնտեսական և սոցիալական բնույթի տարանջատումը թույլ է տալիս ներկայացնել սոցիալական կարիքների և տնտեսական զարգացման համակարգման հիմնախնդիրը՝ որպես նորամուծական գործունեության սոցիալական և տնտեսական ցուցանիշների փոխկապակցվածության հիմնախնդիր:

7. ՀՀ-ում նորամուծական գործընթացների ուսումնասիրությունից և վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ մեր հանապետությունում այդ գործընթացները ներկայանում են հեղինակի կողմից քննարկված մոդելի տեսքով: Ելնելով ուսումնասիրության նյութերից, առանձնապես այն հանգամանքից, որ նորամուծական գործունեության սոցիալական ուղղվածությունն ապահովում է հանրային միջավայրի էական փոփոխություններ, առաջարկվում է ՀՀ նորամուծական զարգացման հայեցակարգի և ռազմավարության հիմքում դնել նորամուծական գործընթացի փոխկապակցված մոդելը՝ աշխատանքում ներկայացված այն կառուցվածքով, որն սկսվում է նոր շուկայական հնարավորության գիտակցումից կամ նոր գիտական հայտնագործությունից և ավարտվում նոր ապրանքի նախագծման, մշակման, արտադրության և իրացման փուլով:
8. Նորամուծական գործունեության ոլորտի արագ զարգացմանը խոչընդոտում է նաև այն, որ ներդրողները շահագրգռված չեն այդ ոլորտում ներդրումներ կատարելու: Հիմնական պատճառը՝ գործնական հարաբերություններում վստահության ցածր մակարդակն է: Թեև ըստ գործարարության համաշխարհային զեկույցի Հայաստանն, ընդհանուր առմամբ, բարելավել է իր վարկանիշը, այնուամենայնիվ, ցածր է մնում “Ներդրողների պաշտպանություն” ցուցիչը: Վստահության և պաշտպանվածության ցածր մակարդակը հանգեցնում է ոչ միայն ներդրումային գրավչության անկման, այլև այս հետազոտությունում շեշտվող կարևոր տարրի՝ ստեղծագործական ներուժի քայքայման, ինչն իր ազդեցությունն է թողնում նորամուծական գործունեության վրա և հանգեցնում դրա պասիվացմանը: Հայաստանում նորամուծական գործունեության նոր ձևերի զարգացմանը արգելակում է ներդրումային ռեսուրսների պակասը:
9. Առաջարկվում է մշակել և ընդունել «Մտավոր սեփականության գնահատման մասին ՀՀ օրենքը», «Մտավոր սեփականության գնահատման

ստանդարտները», ինչպես նաև ՀՀ-ում մտավոր սեփականության գնահատման հայեցակարգ, որից հետո միայն վերջնականորեն ձևավորել մտավոր սեփականության գնահատողների ինստիտուտը և համապատասխան լիցենզիա տրամադրել, որպեսզի նրանց կողմից կատարված գնահատումը օրինական ուժ ունենա, լինի արդյունավետ ու պահանջված և դրանով դառնա նորամուծական տնտեսության ձևավորման լծակ և նորամուծական գործունեության սոցիալական ուղղվածության ընդլայնման միջոց:

10. Նորամուծությունների և նորամուծական գործունեության վերաբերյալ ՀՀ տեղեկատվական դաշտը խոչընդոտներ և բարդություններ է առաջադրում, որոնք դժվարացնում են ուսումնասիրությունների ընթացքը: ՀՀ-ում բացակայում է այս ոլորտի վերաբերյալ անկախ մասնագետների կողմից հաշվարկված ցուցանիշների համակարգը, իսկ այդ հանգամանքը բացառում է համեմատական վերլուծության հնարավորությունը: Այս կապակցությամբ առաջարկվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության ՏՏ և ինովացիոն քաղաքականության վարչությանը կից ստեղծել մի անկախ վերլուծական կենտրոն, որը կբաղվի բացառապես այնպիսի միջազգային վարկանիշային զեկույցների ուսումնասիրությամբ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով փոխկապված են նորամուծական գործունեության հետ, ինչպես նաև՝ սեփական տեղեկատվության հավաքագրմամբ և ոլորտը բնութագրող ցուցանիշների համակարգի ստեղծմամբ և հաշվարկմամբ:
11. Ուսումնասիրությունից և առաջարկված էկոնոմետրիկ մոդելով քանակական վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ նորամուծական գործունեության և սոցիալական ոլորտները սերտորեն փոխկապակցված են և դրանցից յուրաքանչյուրի խթանումը բերում է մյուսի ավելի մեծ չափով զարգացման: Սա նշանակում է, որ նորամուծական գործունեության խթանումը կհանգեցնի կյանքի որակի բարելավման, ինչն իր հերթին ավելի մեծ չափով կազդի նորամուծական գործունեության վրա և այսպես շարունակ:
12. Նորամուծական ձեռնարկատիրությունը, որպես հասարակական հարաբերությունների դրսևորման յուրահատուկ ձև, նպաստում է ոչ միայն հասարակության նյութական և հոգևոր ներուժի բարձրացմանը, այլ նաև յուրաքանչյուր անհատի գործնական նորամուծական հնարավորությունների ու տաղանդի դրսևորմանը:
13. ՀՀ նորամուծական համակարգի հիմնախնդիրներից է նաև պետական գիտահետազոտական ինստիտուտների և համալսարանների կողմից մշակված գիտելիքների և տեխնոլոգիաների արդյունաբերությանը փոխանցման համակարգի թերզարգացվածությունը: Այս իմաստով հարկ է առանձնացնել անբարենպաստ նորամուծական օրենսդրությունը, անբավարար խթանները և հետազոտությունների գերակայությունների որոշման հարցում կառավարության ու բիզնես հատվածի միջև թույլ համագործակցությունը:
14. ՀՀ նորամուծական քաղաքականության կարևորագույն հիմնախնդիրներից է նորամուծական գործընթացի բոլոր փուլերում մասնավոր հատվածի ակտիվ մասնակցության խթանումը: Այդ նպատակին հասնելու համար

պետք է հատկացվեն էական ֆինանսական արտոնություններ գիտական հետազոտություններում և մշակումներում մասնավոր հատվածի կողմից ներդրումների խթանման համար: ՀՀ-ում նորամուծական գործունեության մեջ ներդրումներ կատարող կամ ներգրավող մասնագիտացված ֆինանսական միջնորդ կազմակերպությունների ենթակառուցվածքային ցանցը առայժմ ձևավորված չէ, և հեղինակի կարծիքով, դրանց գործունեության խթանման համար այսպիսի կազմակերպությունների ստեղծման նախնական շրջանում պետությունը կարող է անմիջական մասնակցություն ունենալ դրանց ձևավորմանը: Նշված կազմակերպությունների զարգացմանը և դրանց ֆինանսական կայունության ցուցանիշի բարձրացմանը զուգահեռ՝ պետությունը իր բաժնեմասը նրանց վաճառելով՝ հնարավոր կդարձնի մասնավոր հատվածի ակտիվ մասնակցությունը հետազոտությունների և մշակումների իրականացմանը:

15. Ինստիտուցիոնալ տեսանկյունից Հայաստանում բացակայում է այնպիսի յուրահատուկ ֆինանսական ինստիտուտ, ինչպիսին է նորամուծական և տեխնոլոգիական նախագծերի ֆինանսավորմանն ուղղված վենչուրային կապիտալը: Կառավարության կողմից այս ուղղությամբ նախատեսված քայլերից մեկը կարող է դառնալ պետական երաշխիքների տրամադրումը վենչուրային նախագծերում կատարվող ներդրումներին, ինչը կնվազեցնի այդ ոլորտին բնորոշ մեծ ռիսկերը: Հայաստանում վենչուրային հիմնադրամներ ստեղծելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ձևավորել համապատասխան օրենսդրական բազա, որի հիմքում պետք է ընկած լինի պետություն-մասնավոր գործընկերություն հարաբերությունների խթանման ու կարգավորման համակարգը:

Առենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Բոյաջյան Ռ.Մ. «Նորամուծական գործունեության սոցիալական բնույթը» // «Տեղեկատվական Տեխնոլոգիաներ և Կառավարում» Երևան, 2010, էջ 148
2. Բոյաջյան Ռ.Մ. «Նորամուծությունների տեսության շուրջ» // «Տեղեկատվական Տեխնոլոգիաներ և Կառավարում», Երևան, 2010, էջ 158
3. Բոյաջյան Ռ.Մ. «Նորամուծական գործունեության սոցիալական չափումը» // «Եվրոպական Ակադեմիա» /Գիտական հոդվածների ժողովածու/, Երևան, 2011, էջ 34
4. Բոյաջյան Ռ.Մ. «Նորամուծական ռազմավարության ժամանակակից հիմնախնդիրները» // «ՀՀ ֆինանսներ և Էկոնոմիկա», Երևան, 2012, էջ 14
5. Բոյաջյան Ռ.Մ. «Տնտեսության նորամուծական զարգացման հիմնահարցեր» // «Մխիթար Գոշ» / Գիտամեթոդական Հանդես/Երևան, 2012, էջ 150

Проблемы регулирования социальной направленности инновационного развития РА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02-"Экономика, управление хозяйством и его отраслями".

Защита диссертации состоится на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу 0025, г. Ереван, ул. Налбандяна 128

РЕЗЮМЕ

Диссертация посвящена выявлению теоретических, методологических, правовых и организационных проблем социальной стороны инновационной деятельности и применения конкретных мер и механизмов для решения этих вопросов.

В диссертации представлено, что на нынешнем этапе общественного развития инновационная деятельность может стать главным фактором устойчивого развития, основой для конкурентоспособности на рынке и ключом к решению социальных вопросов, а создание национальной инновационной системы может стать самым эффективным способом для развития реального и финансового секторов современной экономики. Диссертация доказывает, что во время этого процесса, определение, наблюдение и отделение социальной направленности инновационного развития получает большое значение.

Основной целью диссертации является выявление существующих проблем, тенденций текущих инновационных процессов, способы их регулирования при помощи исследования национального и международного опыта, анализа экономической и социальной сферы РА, а также выявить степень тесноты между внедрением инноваций и социальными изменениями и предложить новые способы регулирования.

Главной целью данной работы является изучение международного и отечественного опыта Республики Армения, выявление существующих проблем методом анализа деятельности в экономической и социальной сферах, тенденций протекающих инновационных процессов, методов их контроля, выявление связи между осуществлением инноваций и социальных перемен, а также представление новых методов контроля. Для данной цели выявлены следующие задачи:

- Изучить суть инновационного развития, интерпретации разных мнений по этому вопросу. Обосновать важность инновационных процессов на этом этапе экономического развития.
- Изучить научные положения взаимозависимости социальных и эконо-

мических индикаторов при инновационной деятельности.

- Изучить проблемы, направления и тенденции инновационных развитий в Республике Армения.
- Изучить социальные особенности инновационного экономического развития.
- Представить возможности инновационного развития в Республике Армения.
- Объяснить и продемонстрировать взаимосвязь между инновационным развитием и ростом благосостояния населения.
- Охарактеризовать активную и творческую среду как источник инновационной деятельности.

Основные научные результаты данного тезиса относятся к вопросам социального направления инновационного развития, и их научным новинкам:

- Предложен новый подход к базовой сущности инновационной деятельности, рассматривая ее как процесс использования и распространения результатов креативной работы, то есть созданием нового продукта, который улучшает качественные стороны социальной среды как социодинамический мультипликатор.
- Предложена модель, характеризующая степень близости между качеством жизни и инновационной деятельностью, которая отражает взаимосвязь между инновационной деятельностью и социальной отраслью, когда стимуляция одного из них приводит к значительному развитию другого.
- Выявлено, что процесс перемен постоянно выделяет побочные результаты, и для интерпретации социальных сторон инновационной деятельности внешние результаты (эффекты) или "экстерналы" приобретают очень важную роль.
- Предложена система, характеризующая взаимосвязь между инновационной деятельностью и общественными институтами, которая определяет социальную направленность инновационной деятельности.

Regulatory Problems of Social Orientation of Innovative Development of RA

The abstract of thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02 - "Economics, Management of the Economy and its Branches".

The defense of the thesis will take place on November 14, 2013 at 15:30 o'clock at 014 Council on Economics of SCC RA at Armenian State University of Economics: 128 Nalbandyan Street, Yerevan, Armenia, 0025.

ABSTRACT

The dissertation is devoted to the identification of the theoretical, methodological, legal and organizational problems of the social side of innovative activity and the application of specific measures and mechanisms to address these issues. The thesis also presents that during the current stage of public development the innovative activity can become a main tool for the sustainable development, a base for market competitiveness and a key for solving social issues, also the foundation of National Innovative system can become the most effective way for the development of the real and financial sectors of modern economy. The thesis proves that during this process defining, observing and separating the social orientation of innovative development receives a great importance.

The main goal of the thesis is to identify existing problems, trends of the ongoing innovative processes, its settlement terms with the help of research of national and international experiences, analysis of RA economics and social spheres, and to reveal the degree of rapprochement between implementation of innovations and social changes and to suggest new ways of regulation.

The main goal of the thesis is to study the international and domestic experience, lay out the modern problems by analyzing the Republic of Armenia social and economic activities, tendencies of current innovative processes and its control methods, explore the level of vicinity between the realization of innovations and the social changes, and also propose new control methods. For that reason the following tasks have been detected:

- Study the nature of the innovative development and the interpretation of different opinions about it. Emphasize the importance of the innovative processes in this stage of economic development.
- Study the scientific points of economic and social indicators' correlation in the innovative activity.
- Study the RA innovative development problems, directions and tendencies.
- Study social peculiarities of the innovative economic development.
- Introduce the potentials for innovative development in RA.
- Explore and demonstrate the interrelation between the innovative development and the growth of people's welfare.

- Describe the social active and creative atmosphere as a source of innovative development.

The main scientific results of the thesis refer to the problems of innovative development social orientation and its scientific novelty is as follows:

- The social direction of the innovative processes have been revealed, a new approach for the content basis of innovative activities have been formed, that views it as a process of creative activity or creation of a new product, which is working as a sociodynamic multiplication means in improving the qualitative character of the social environment.
- A model was developed to illustrate the rapprochement degree between life quality and innovative activity, which describes interconnectivity of innovative activity and social spheres, when stimulation of each leads to the significant development of the other.
- It was revealed that the modification processes constantly extract new side effects - it appears that for the interpretation of the social sides of innovative activities the external effects or "externals" become very important.
- A mechanism is designed which describes the interconnectivity between innovative activity and public institutes which justifies the social course of the innovative activity.

A handwritten signature in black ink, appearing to be 'R. K. ...', located in the lower right quadrant of the page.